Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում[1]

Contents

Խնդիրը 2
Հայաստանից արտագաղթի մակրոսոցիոլոգիական համատեքստը 2
Մեթոդաբանություն 7
Հետազոտության տվյալները 9
Արդյունքներ 10
Արտագաղթի դիրքորոշումները սոցիալ-ժողովրդագրական խմբերում 10
Ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը և արտագաղթի դիրքորոշումը 11
Երկրում առկա իրավիճակի ընկալումը և արտագաղթի դիրքորոշումները 14
Սոցիալական պաշտպանվածության դեպրիվացիան և արտագաղթի դիրքորոշումները 20
Քաղաքական ընդգրկվածությունը և արտագաղթի դիրքորոշումները 23
Սոցիալական լարվածությունները և արտագաղթի դիրքորոշումը 26
Եզրակացություններ 28

Սամվել Մանուկյան, սոց.գ.թ., «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ

Հեռ. 077 55 75 38,
էլ. փոստ samvelmanukyana@gmail.com

[1] Հոդվածը հրապարակվել է «Հասարակական առաջընթաց» քաղաքացիական նախաձեռնության կազմակերպած «Արտագաղթի հոգեբանությունը. գաղթականի կյանքը իջեցված սոցիալական կարգավիճակի պայմաններում» գիտաժողովի շրջանակներում՝ «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից, ՀՀ կառավարության պատվերով, 2012թ. դեկտեմբերին Հայաստանում իրականացված «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում» սոցիոլոգիական հետազոտության տվյալների շտեմարանի կիրառմամբ:

Խնդիրը

2008թ. համաշխարհային ճգնաժամից հետո Հայաստանից արտագաղթը նորից սկսեց աճել: Այն դեռևս չի հասել 1990-ականների կեսերի մասշտաբներին, սակայն միտումներն անհանգստացնող են:

Հոդվածում դիտարկվել են հետևյալ հարցերը. որո՞նք են Հայաստանից արտագաղթի հիմնարար և ածանցյալ պատճառները, հնարավո՞ր է արդյոք դադարեցնել կամ կրճատել արտագաղթը, ո՞ր գործոններն են առավել արդյունավետ ներկայում Հայաստանից արտագաղթը կրճատելու տեսակետից և որքանո՞վ է հնարավոր կրճատել արտագաղթը:

Հայաստանից արտագաղթի մակրոսոցիոլոգիական համատեքստը

Զանգվածային արտագաղթը, երբ մարդիկ ընդմիշտ հեռանում են իրենց հայրենիքից, ինքնուրույն գործընթաց չէ: Այն ածանցվում է երկրում տիրող վիճակից, որը որպես կենսագործունեության միջավայր անտանելի կամ անընդունելի է դառնում բնակչության լայն շերտերի համար: Երկրում նրա բնակիչների համար անտանելի կամ անընդունելի միջավայրը, որպես կանոն, և՛ երկրի ներսում առաջացած, և՛ երկրից դուրս գտնվող գործոնների ազդեցության հետևանք է: Թե այդ գործոններից որոնք են առաջնային կամ ավելի հզոր՝ պայմանավորված է երկրի պատմական ընթացքով և այդ համատեքստում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտատեխնիկական և այլ պրոցեսներով:

Օրինակ, XVIII դարում արտագաղթը Անգլիայից հետևանք էր այդ երկրի տեքստիլ արդյունաբերությունում (և մի շարք այլ ոլորտներում) տեխնոլոգիական հեղափոխության, որը ներքին գործընթաց էր: Բանվորների ֆիզիկական ուժը և հմտությունները մեքենաներով փոխարինելու հետևանքով առաջացավ բանվորական ուժի մեծ ավելցուկ: Մյուս կողմից, մեքենաների բարձր արտադրողականությունն առաջացրեց բրդի պահանջարկի կտրուկ աճ: Դրա հետևանքով Անգլիայի վերնախավերը սկսեցին գյուղացիներին արտաքսել իրենց հողատարածքներից՝ նրանց գյուղատնտեսական հողահանդակները վերածելով ոչխարների արոտավայրերի: Հողազրկված գյուղացիները չէին կարող աշխատանք գտնել քաղաքում, քանի որ տեխնոլոգիական հեղափոխությունը նվազեցրել էր աշխատուժի պահանջարկը, և Անգլիայից սկսվեց մեծ արտագաղթ: Այսպիսով, **Անգլիայում արտագաղթի հիմնարար պատճառները ներքին էին**:

1990-ականներին հետխորհրդային երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, արտագաղթի հիմնարար պատճառը **արտաքին էր՝ դա ԽՍՀՄ պարտությունն էր սառը պատերազմում**:

Խորհրդային պարտված ինքնաբավ մեծ տնտեսական տարածքում անկախացած հանրապետությունների միջև կտրվեցին նախկին տնտեսական և տեխնոլոգիական կապերը, որի հետևանքով բոլոր հանրապետություններում արդյունաբերությունն անկում ունեցավ, և այդ երկրներն իջան ավելի ցածր տեխնոլոգիաներ օգտագործող և ավելի պարզունակ տնտեսական կապեր պահանջող տնտեսական *նիշաներ*: Որքան ավելի բարձր զարգացած էր տվյալ

խորհրդային հանրապետությունում արդյունաբերությունը, այնքան ավելի կտրուկ էր անկումը: Հայկական ԽՍՀ-ն այդպիսին էր: Աշխարհամակարգային վերլուծության տերմիններով՝ **խորհրդային մեծ տնտեսական տարածքն աշխարհամակարգի Կիսածայրամասից, որն ուներ բավական բարձր, իսկ մի շարք գիտատեխնիկական ոլորտներում աշխարհում ամենազարգացած տեխնոլոգիաները, վերածվեց Ծայրամասի, որը հանդիսանում է աշխարհամակարգային Կենտրոնի կամ, այլ կերպ՝ զարգացած երկրների հանքահումքային կցորդը**, այնպես, ինչպես երրորդ աշխարհի երկրները: Հետխորհրդային այն երկրները, որոնք ունեին նավթի և գազի մեծ պաշարներ՝ Ռուսաստանը[2], Ղազախստանը, Ադրբեջանը, Թուրքմենստանը, հայտնվեցին համեմատաբար ավելի «լավ» պայմաններում, նրանց դերն աշխարհամակարգում ակնհայտ էր ի սկզբանե: Կենտրոնի վերազգային ընկերությունների աջակցությամբ և առաջնորդությամբ նրանք վերածվեցին նավթ և գազ արտահանող երկրների, հաստատվեցին այդ *նիշայում* և նավթագազային ռեսուրսների արտահանումից սկսեցին ստանալ զգալի եկամուտներ[3]: Իսկ այն երկրները, որոնք չունեին հանքահումքային նշանակալի ռեսուրսներ՝ Հայաստանը, Վրաստանը, Տաջիկստանը, Մոլդովան, Կիրգիզիան և նույնիսկ Ուկրաինան, հայտնվեցին շատ ավելի ծանր պայմաններում:

Միջազգային ֆինանսական կառույցները՝ հիմնականում Արժույթի միջազգային հիմնադրամը և Համաշխարհային բանկը, սառը պատերազմում պարտված պետություններին պարտադրեցին վերակառուցել իրենց տնտեսությունները լիբերալ տնտեսական գաղափարախոսության դրույթներին համապատասխան, որի հիմնական նպատակն էր վերացնել այդ երկրների այն արտադրությունները, որոնք ունակ էին վերածվելու արևմտյան համանման ընկերությունների մրցակիցների և այդպիսի վիճակով ընդգրկել նրանց գլոբալ տնտեսություն, ինչը վերջնականապես ոչնչացրեց ինչպես այդ երկրների բարձր տեխնոլոգիական գիտատար արդյունաբերությունը, այնպես էլ գիտատեխնիկական պոտենցիալը:

Հարկ է նշել, որ ինչպես խորհրդային, այնպես էլ արևմտյան հեղինակավոր տնտեսագետները զգուշացնում էին խորհրդային վերջին և հետխորհրդային առաջին տարիների ղեկավարներին և տնտեսության երիտասարդ գաղափարախոս-ճարտարապետներին լիբերալ տնտեսական գաղափարախոսությունների կործանարարության մասին: Մասնավորապես, XX դարի ամենահեղինակավոր տեսաբան տնտեսագետներից մեկը՝ ամերիկացի տնտեսագետ Ջ.Կ. Գելբրայթը, դեռևս 1990թ. փետրվարին «Լիտերատուրնայա գազետային» տված հարցազրույցում զգուշացնում էր «նորարար» քաղաքական գործիչ-տնտեսագետներին. «Նախ կուզեի խորհուրդ տալ, որպեսզի դուք որոշակի զսպվածություն ցուցաբերեք Արևմուտքից տրվող տնտեսական հանձնարարականների նկատմամբ: Որքանով որ կարող եմ դատել մամուլի հրապարակումներից, այդ հանձնարարականները տալիս են այն մարդիկ, որոնց կույր հավատն ազատ շուկայի գաղափարախոսության նկատմամբ, և այն համոզվածությունը, թե պետությունը ոչ մի դերակատարում չպետք է ունենա տնտեսական կյանքում, կործանարար կլինեին նաև մեզ [ամերիկացիներիս] համար, եթե մենք նրանց

[2] Այստեղ մենք չենք կենտրոնանա Ռուսաստանի առանձնահատկությունների վրա:
[3] Այլ հարց է, թե նրանք ինչ պայմաններում և ինչպես են տնօրինում այդ եկամուտները:

լսեինք»[4]: Այնուամենայնիվ, աշխարհամակարգային հարաբերությունների տրամաբանությունն ավելի ուժեղ գտնվեց:

Հայաստանում հողի սեփականաշնորհման միջոցով ապատեխնոլոգիականացվեց նաև գյուղատնտեսությունը: Անհատ գյուղացիներն անկարող դարձան մշակել նույնիսկ իրենց՝ գյուղատնտեսական տեսակետից միկրոսկոպիկ հողատարածքները[5], քանի որ դրանցում հնարավոր չէր կիրառել այն գյուղտեխնիկան և ագրոտեխնիկան, որ հարմարեցված էին խոշոր հողատարածքների և ինդուստրիալ գյուղատնտեսության համար, անհատ ֆերմերները վարկերի, ներդրումների և կազակերպչական ունակությունների բացակայության պայմաններում չկարողացան գործարկել խոշոր անասնապահական ֆերմաները, գյուղմթերքների մշակման գործարաններն ու արտադրամասերը: Գյուղատնտեսության սպասարկման գիտամեթոդական և տեխնոլոգիական կազմակերպությունների և մեքենատրակտորային կայանների լուծարման հետևանքով գյուղատնտեսությունը սկսեցին վարել անարդյունավետ ձևերով: Այն դարձավ համարյա բնատնտեսական: Արդյունաբերական կոլապսի պատճառով կանգ էին առել նաև խոշոր գյուղերում հիմնադրված արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերը, որոնք կլանում էին զարգացող և սոցիալիստական ինդուստրիալ գյուղատնտեսության անցնող գյուղերում ավելցուկային աշխատուժը: Գյուղում նույնպես առաջացավ աշխատուժի ավելցուկ, իսկ գյուղատնտեսությամբ զբաղվելը դարձավ անշահավետ[6]: Անգործության մատնված գյուղական ենթակառուցվածքները մասնատվեցին, թալանվեցին, իսկ որևէ նշանակություն ունեցող բաղադրիչները վաճառվեցին ամենացածր գներով:

Հայաստանում տնտեսության անկման բացասական հետևանքները խորացրին, մի կողմից, 1988թ. Սպիտակի երկրաշարժը, որի հետևանքով ավերածություններ առաջացան Հայաստանի տարածքի մեկ երրորդում[7], մյուս կողմից՝ Ղարաբաղյան պատերազմը: Վերջինս, մի կողմից, ունեցավ հսկայական դրական նշանակություն, քանի որ 1988-ին սկսված հայկական իռեդենտան հայկական բազմադարյան ազգային-ազատագրական պայքարի ակնհայտ հաջողությունն էր: Սակայն, աշխարհամակարգային վերակազմավորման համատեքստում,

---

[4] *Гелбрайт Д.К.,* Мы уже преодолеваем эпоху капитализма и социализма // Литературная газета. 14 февраля 1990г., Интервью с Ф.Бурлацким.

[5] Սեփականաշնորհման արդյունքում Հայաստանում գյուղացիական մեկ տնտեսությունը ստացավ միջին հաշվով 1.5 հա հողատարածք:

[6] Նշենք, որ համանման գործընթացներ տեղի ունեցան բոլոր հետխորհրդային հանրապետություններում, այդ թվում նաև Մերձբալթյան հանրապետություններում, որոնք խորհրդային ժամանակաշրջանում հանդիսանում էին բարձր զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրներ: Միայն Բելոռուսիայում, որտեղ 1994-ից դադարեցվեց հողի սեփականաշնորհումը և պահպանվեցին կոլեկտիվ տնտեսությունները, գյուղատնտեսությունը պահպանեց բարձր արտադրողականությունը և այսօր Ռուսաստանին գյուղմթերքներ մատակարարող հիմնական երկրներից մեկն է՝ այն պայմաններում, երբ Եվրամիությունն արգելափակում է բելոռուսական գյուղմթերքների մուտքն իր տարածք:

[7] Հարկ է հատուկ նշել, որ խորհրդային կարգերի կազմալուծման հետևանքով, երբ կառավարման համակարգը, ըստ էության, կաթվածահար էր եղել, Հայաստանին 1989-1990թթ. տրամադրված բազմամիլիարդ դոլարների դրամական և նյութական օգնությունը խորհրդային հանրապետություններից և Սփյուռքից ծայրահեղ անարդյունավետ օգտագործվեց: Որքան էլ ցավալի և ամոթալի է, սակայն անաչառ վերլուծությունը պահանջում է նշել, որ դրա զգալի մասը Հայաստանում պարզապես գողացվեց և ոչ միայն դարձավ ներկայի որոշ խոշոր կարողությունների հիմքը, այլև խթանեց հասարակական բարքերի և արժեհամակարգի կազմալուծումը, հատկապես՝ աղետի գոտում:

որը կազմավորեց պերիֆերիկ կապիտալիզմի հայկական տարբերակը, այդ համատեքստի և հայկական պերիֆերիկ կապիտալիզմի բացասական ազդեցություններն ազատագրական պայքարի հաջողությունից շատ ավելի հզոր գտնվեցին, և վերջինս ունակ չեղավ ամբողջ ուժով արտահայտվելու[8]: Հոգեբանական վերելքը փոխարինվեց ապագայի նկատմամբ անվստահությամբ:

Այսպիսով.

- **Հայաստանից արտագաղթի ինչպես 1990-ականների առաջին ալիքը, այնպես էլ 2008թ. հետո սկսված երկրորդ ալիքն աշխարհամակարգի վերակառուցման և դրա արդյունքում Հայաստանում կազմավորված պերիֆերիկ կապիտալիզմի հետևանք են, որոնցից առաջինն ուներ արտաքին ծագում, իսկ երկրորդը դրա ուղղակի արտահայտ-չաձևն էր Հայաստանում**:

Համակարգային տեսակետից, անկախության ժամանակահատվածում՝ մինչև այսօր, հայաստանյան ներքին (էնդոգեն) գործոնները և պրոցեսները հանդիսանում են գլոբալ գործոնների և պրոցեսների ածանցյալները, որոնք մոդիֆիկացվել են հայկական էթնո-սոցիո-մշակութային-տնտեսական համակարգի բնույթով, այսինքն՝ ներհայաստանյան պրոցեսներն առավելապես գլոբալ և տարածաշրջանային գործոնների և պրոցեսներին հայկական էթնո-սոցիո-մշակութային-տնտեսական համակարգի ռեակցիայի արդյունքն են: Դրա մասին է վկայում Հայաստանում տեղի ունեցող պրոցեսները նկարագրող մի քանի ինդիկատորների ժամանակային շարքի նույնիսկ հպանցիկ դիտարկումը:

Գծապատկեր 1-ում ներկայացված է 2000-2012թթ. Հայաստանում ՀՆԱ աճը նախորդ տարվա համեմատ, գործազրկության մակարդակը, Հայաստանից մեկնածների և Հայաստան ժամանածների սալդոն և այդ սալդոյի կուտակային գումարը.

[8] Առանց մանրամասնելու նշենք, որ ազատագրական պայքարի հաղթանակի իրացման անհաջողությունների հիմքում ընկած են ծայրամասային կապիտալիզմի (տե՛ս *Пребиш Р.,* Периферийный капитализм: есть ли ему альтернатива / сокращённый перевод с испанского (Fondo de Cultura Economica, Mexico, 1981), М., ИЛА РАН, 1992) կենսագործունեության բնույթն ու տրամաբանությունը:



Գծապատկեր 1

Նախ՝ տվյալներից բխում է, որ Հայաստանում 2000-2012թթ. եղել է գործազրկության շատ բարձր մակարդակ (դրա անկումը 2008թ. պայմանավորված է գործազրկության նույնականացման մեթոդաբանության փոփոխությամբ), ինչը նշանակում է, որ Հայաստանի ապաարդյունաբերականացված տնտեսությունը շարունակաբար ունակ չի եղել կլանելու Հայաստանում առկա աշխատուժը և հաստատում է Հայաստանի աշխարհամակարգային *նիշայի* անկումից բխող վերոբերյալ դրույթները:

2001-2007թթ. Հայաստանում արձանագրվել է ՀՆԱ նախորդ տարվա համեմատ բավական բարձր (10%-ից ավելի) աճ, 2009թ. կտրուկ անկում (-14%), իսկ 2010-2012թթ. աճ, սակայն ոչ այնպիսին, ինչպիսին գրանցվել է 2001-2007թթ. ընթացքում: Սա հաստատում է այն դրույթը, որ Հայաստանի տնտեսական համակարգն արձագանքում է գլոբալ տնտեսական պրոցեսներին. երբ գլոբալ տնտեսությունն աճում էր, Հայաստանում նույնպես գրանցվում էր շատ բարձր աճ: 2002-2007թթ. գլոբալ և Հայաստանի տնտեսության արագ աճի պայմաններում Հայաստանում գրանցվել էր մեկնողների և ժամանողների շատ փոքր բացասական կամ դրական սալդո: Սակայն 2003-2007թթ. նույնիսկ ՀՆԱ տարեկան 11-14% աճը գործազրկության մակարդակը նվազեցրել է ընդամենը 2%-ով: Չի բացառվում, որ այդ ժամանակաշրջանում արտագաղթի նվազումը պայմանավորված է երկու հիմնական գործոնով: Նախ՝ տրանսֆերտները բավական բարձր են եղել, որպեսզի արտագնա աշխատանքի մեկնածների ընտանիքները կարողանան բավարար չափով բարեկեցիկ ապրեն Հայաստանում: 2005-2008թթ. ընթացքում մասնավոր տրանսֆերտներն աճել են տարեկան 23-37%-ով, 2005թ. 752 միլիոն դոլարից մինչև 1623 միլիոն դոլար 2008թ.: Երկրորդ գործոնն այն էր, որ աշխատանքային միգրացիայի երկրներում, հիմնականում Ռուսաստանում, դեռևս չէին ձևավորվել հայկական նոր միգրացիոն ցանցերը:

2008թ. գլոբալ ֆինանսական ճգնաժամը Հայաստանում զգացվեց միայն մեկ տարի անց՝ 2009թ.: Իսկ գլոբալ տնտեսության դանդաղ վերականգնումը Հայաստանում արտահայտվեց

ՀՆԱ բավական փոքր աճով, որն ինֆլյացիայի հաշվառման պարագայում կլիներ էլ ավելի փոքր, եթե ոչ՝ բացասական:

Սակայն, սկսած 2008 թվականից, արտագաղթը նորից շարունակաբար աճում է: Այս երևույթի հիմնական պատճառ կարող է դիտվել այն, որ 2000-ականներին արտագաղթի երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, արդեն կայացել էին «նոր» հայկական գաղութները, նվազել էին արտագաղթողների ադապտացման հետ կապված անորոշությունները: Մյուս կողմից՝ չնայած 2012թ. մասնավոր տրանսֆերտների ծավալն անվանական արժեքով հավասարվեց 2008թ. մակարդակին, սակայն, եթե հաշվի առնենք դրամական և դոլարային ինֆլյացիան 5 տարվա ընթացքում, ապա պատկերը կփոխվի. արտագնա աշխատողների ընտանիքների եկամուտները տրանսֆերտներից չեն հասել 2008թ. մակարդակին: Հետևաբար, տնտեսական ռացիոնալության տեսակետից ավելի շահավետ է դառնում ընտանիքներով արտագաղթը, քան տրանսֆերտները: Մյուս կողմից՝ պարզվեց, որ արտագաղթի երկրներում (հիմնականում Ռուսաստանում) տնտեսական պայմանները շարունակաբար ավելի բարենպաստ են, իսկ **Հայաստանում շարունակաբար չի ձևավորվում ապագայի դրական տեսլականը**: Արդյունքում՝ արտագաղթն ինտենսիվացավ:

Հետևաբար,

- **Հայաստանի տնտեսությունը դեռևս չի հասել կայունացման վիճակին, երբ այն ունակ կդառնա աշխատանքով, իսկ աշխատանք ունենալու պարագայում՝ համապատասխան վարձատրությամբ ապահովել իր ամբողջ աշխատուժը:**

Այսինքն՝

- **Հայաստանում արտագաղթի առաջացման և հարատևման հիմնական համատեքստը շարունակում է գործել՝ հայկական էթնո-սոցիո-մշակութային համակարգն իր «չափերով» դեռևս «ավելի մեծ է», քան ունակ է պարտակել Հայաստանի գլոբալ պահանջներին համապատասխան վերակառուցված ծայրամասային տնտեսությանը:**

Հետևաբար,

- **Հայաստանից արտագաղթի խնդրի արմատական լուծումը գտնվում է նրա աշխարհամակարգային նիշան բարձրացնելու, ավելի կոնկրետ՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ոլորտում:**

Սակայն այս հիմնարար խնդրի քննարկումն այլ աշխատանքի նյութ է:

Այդուհանդերձ, հաշվի առնելով վերոշարադրյալը՝ հնարավո՞ր է արդյոք Հայաստանում նվազեցնել արտագաղթը և որո՞նք են դրա հնարավորությունները:

Մեթոդաբանություն

Միգրացիայի կառավարման գործոնների վերհանման համար կարող է կիրառվել և հաճախ կիրառվում է հետևյալ մոտեցումը. տրվում է, օրինակ, հետևյալ կամ նմանօրինակ, հարցը. «Հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկնեի՞ք Հայաստանից դուրս ապրելու»: Դրական

պատասխան ստանալուց հետո կարելի է բաց հարց[9] տալ. «Ի՞նչ պատճառով եք ցանկանում ընդմիշտ մեկնել Հայաստանից», իսկ հետո. «Ո՞ր դեպքում Դուք կփոխեիք Ձեր դիրքորոշումը»: Այսպիսի մոտեցման դեպքում, որպես կանոն, հարցվողները տալիս են ստերեոտիպային պատասխաններ: Դրանք Հայաստանում արդեն տասնյակից ավելի տարիների ընթացքում կատարված բազմաթիվ հետազոտությունների ընթացքում վեր են հանվել և կատեգորիզացվել են:

Սակայն այս դեպքում դժվար է վստահաբար ասել՝ արդյո՞ք անձի կողմից բացահայտորեն նշված պայմաններն են իրականում ձևավորել նրա արտագաղթելու դիրքորոշումը, իսկ մյուս կողմից, որն ավելի կարևոր է, հարցվողը, որպես կանոն, տալիս է ուղղակիորեն իրեն կամ իր ընտանիքին վերաբերող պատասխաններ, իսկ իրենից դուրս գտնվող պատճառները ձևակերպվում են շատ ընդհանուր: Սակայն, ինչպես պարզվեց նախաբանում, արտագաղթի դիրքորոշումները ձևավորող իրական, խորքային, համակարգային պատճառները դուրս են գտնվում անձի կոմպետենտության ոլորտից, աշխարհայացքային համակարգից, կամ միջնորդավորված կերպով են ազդում անձի օբյեկտիվ վիճակի և նրա կողմից վիճակի սուբյեկտիվ ընկալումների վրա, կամ արտամղված են լինում նրա գիտակցությունից, կամ նրա կողմից ռացիոնալացվել են ոչ ադեկվատ կերպով և այլն:

Ներկայացվող աշխատանքում արտագաղթի դիրքորոշումների վրա ազդող գործոնների և դրանց ազդեցության ուժի գնահատման համար կիրառվել է կորելյացիոն վերլուծության վրա հիմնված այլ մոտեցում, որն ունի պարզ և ընկալելի հիմք: Ենթադրվել է, որ եթե անձի օբյեկտիվ վիճակը կամ նրա որևէ սուբյեկտիվ դիրքորոշումը արտապատկերող փոփոխականը վիճակագրորեն նշանակալի կորելցված է նրա արտագաղթելու դիրքորոշման հետ, ապա այդ փոփոխականը հանդիսանում է արտագաղթի դիրքորոշումը կառավարող փոփոխական: Որքան ավելի մեծ է կորելյացիան, այնքան ավելի հզոր է դիտարկվող փոփոխականի ազդեցությունը:

Այս մոտեցման դեպքում առաջանում են երկու հիմնական դժվարություններ: Առաջին. արդյո՞ք վեր հանված կորելյացիան կեղծ չէ, այսինքն՝ չի հանդիսանում այնպիսի երրորդ փոփոխականի ազդեցության արդյունք, որը, կորելացված լինելով դիտարկվող երկու փոփոխականների հետ, նրանց միջև առաջացնում է բովանդակազուրկ կորելյացիա: Երկրորդ. եթե փորձարկվող և արտագաղթի դիրքորոշման հետ կորելացված փոփոխականները բազմաքանակ են և հաճախ՝ լինելով ավելի խորքային բարդ կոնցեպտի արտահայտման տարբեր ասպեկտները, ունեն ընդհանուր դիսպերսիա, ապա ինչպե՞ս ընդհանրացնել ստացված արդյունքները և ինչպե՞ս զատել առավել կարևորը պակաս կարևորից[10]:

Նշված երկու դժվարությունները հաղթահարվում են գործոնային վերլուծության միջոցով, որը թույլ է տալիս միմյանց հետ ուժեղ կորելացված բազմաքանակ փոփոխականների խմբից

---

[9] Բաց է կոչվում այն հարցը, որի պատասխանների տարբերակները կանխորոշված և ստանդարտացված չեն: Գրառվում են այն պատասխանները, որոնք տալիս է հարցվողը, որոնք հետագայում խմբավորվում են:

[10] Կորելյացիաների արժեքները հաճախ այնքան մոտ են ստացվում միմյանց, որ դրանց տարբերությունները պարզապես վիճակագրական սխալի արդյունք են: Սակայն ավելի կարևոր է այն, որ խորացված վերլուծության դեպքում, օրինակ, մասնակի կորելյացիաները հաշվարկելիս առաջին կարգի կորելյացիաներով կազմավորված պատկերը կարող է էականորեն փոխվել:

կառուցել փոքրաքանակ նոր բաղադրյալ փոփոխականներ՝ դրանով իսկ մի կողմից ավելի կոմպակտ և ընկալելի դարձնելով փոփոխականների մեկնաբանությունը, իսկ մյուս կողմից՝ բաղադրյալ փոփոխականը, որոնք ներառում են միավորված [պարզ] փոփոխականների ընդհանուր դիսպերսիան, միաժամանակ ստանում են բովանդակային բազմազանություն, ինչը թույլ է տալիս դուրս բերել ավելի ընդհանուր և խոր կոնցեպտներ:

Դրանից հետո պարզապես պետք գտնել արտագաղթի դիրքորոշման փոփոխականության վրա առավել մեծ ազդեցություն և, հետևաբար՝ կառավարման ունակություն ունեցող գործոնները [բաղադյալ փոփոխականները]:

Գործոնային վերլուծությամբ կազմավորված ընդհանուր պատկերի մեկնաբանությունից հետո դրա արդյունքները հակադարձաբար ունակ են ուղղորդելու նաև հետագա ավելի մանրամասն վերլուծության ընթացքը՝ մատնանշելով այն առանձին [պարզ] փոփոխականները, որոնք առավել կարևոր են արտագաղթի դիրքորոշման կառավարման տեսակետից:

Որպես հետազոտության տվյալների մեկնաբանության հիմնական համատեքստ կիրառվել է աշխարհամակարգային վերլուծությունը[11]:

Հետազոտության տվյալները

Աշխատանքում միգրացիան կառավարող գործոնների վերհանման և ուսումնասիրության համար կիրառվել է ՀՀ կառավարության պատվերով «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից 2012թ. դեկտեմբերին իրականացված «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.»[12] հետազոտության տվյալների շտեմարանի երկրորդային վերլուծությունը: Միաժամանակ օգտագործվել են նաև այլ սոցիոլոգիական հետազոտությունների, ինչպես նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները:

«Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.» հետազոտության ընտրանքի ծավալն էր 2000 հարցվող: Հարցվել է Հայաստանի 18 և ավելի տարիքի բնակչությունը: Ընտրանքը ներկայացուցչական է ըստ սեռի, տարիքի, ՀՀ մարզերի, բնակավայրի տիպի (մայրաքաղաք – քաղաք – գյուղ):

Հետազոտության հարցաթերթը պարունակում էր անձի դիրքորոշումների և նրա ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ մոտ 800 հարց, ինչը հնարավորություն է տվել իրականացնել արտագաղթի դիրքորոշումների բավական բազմաբնույթ վերլուծություն և նկարագրել դրանք կառավարելու ունակ գործոնների բովանդակությունը:

---

[11] *Валлерстайн И.,* Анализ мировых систем и ситуация в современном мире, СПб., Издательство «Университетская книга», 2001, 416 с.

[12] Տես՝ http://gov.am/u_files/file/presentations/IPSC_QL_2012_Report_30_03_2013_ARM.pdf

Արդյունքներ

«Հայաստանում կյանքի որակի ինդեքսը 2012թ.» հետազոտությունում առկա էր հարցվածների արտագաղթի դիրքորոշումներն արտապատկերող ստանդարտ փոփոխականը, որը կազմված էր «**Հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկնեի՞ք Հայաստանից դուրս ապրելու**» հարցին տրված պատասխաններից: Պատասխանների տարբերակներն էին. «Միանշանակ այո», «Ավելի շուտ այո», «Ավելի շուտ ոչ», «Միանշանակ ոչ»: Արդյունքներն առավելագույնս ընկալունակ դարձնելու համար այդ սանդղակը դիխոտոմացվել է, այսինքն, եթե հարցվողն արտագաղթելու վերաբերյալ հարցին պատասխանել է «Միանշանակ այո» և «Ավելի շուտ այո», ապա համարվել է, որ նա արտագաղթելու դիրքորոշում ունի, իսկ «Միանշանակ ոչ» և «Ավելի շուտ ոչ» պատասխանների դեպքում համարվել է, որ նա արտագաղթելու դիրքորոշում չունի:

Այսպիսով, աշխատանքում արտագաղթի դիրքորոշումներ կամ դրանց մակարդակ ասելով՝ նկատի ունենք «Հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկնեի՞ք Հայաստանից դուրս ապրելու» հարցին տրված «Միանշանակ այո», «Ավելի շուտ այո» պատասխանների միացյալ քանակը:

Աշխատանքում ենթադրվում է, որ.

- **անձի արտագաղթը՝ չնչին բացառություններով, հնարավոր է դրա դիրքորոշման առկայության պարագայում: Հետևաբար, այն ամենը, ինչը նպաստում է այդ դիրքորոշման նվազեցմանը, նպաստում է նաև արտագաղթի կրճատմանը:**

Արտագաղթի դիրքորոշումները սոցիալ-ժողովրդագրական խմբերում

2012թ. դեկտեմբերին Հայաստանից ընդմիշտ արտագաղթելու [ուժեղ կամ թույլ] դիրքորոշում ուներ Հայաստանի չափահաս բնակչության մոտ կեսը՝ 49.6%-ը (Գծապատկեր 2): Ընդ որում, արտագաղթելու ուղղությամբ որոշակի քայլեր էր ձեռնարկում բոլոր հարցվածների մեկ երրորդից ավելին՝ 35.7%-ը:



Գծապատկեր 2

Հարկ է նշել, որ դրանից մեկ տարի առաջ՝ 2011թ. դեկտեմբերին, Հայաստանի 18-30 տարեկան երիտասարդների շրջանում իրականացված սոցիոլոգիական զանգվածային հետազոտու-

թյան տվյալներով, ընդմիշտ արտագաղթելու հակված է եղել նրանց 37.5%-ը[13], իսկ «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.» հետազոտության տվյալներով՝ ընդմիշտ արտագաղթի հակված էր 18-30 տարեկանների ադեն 58%-ը (Գծապատկեր 3): Այսինքն.

- **2011թ. դեկտեմբերից մինչև 2012թ. դեկտեմբեր մեկ տարվա ընթացքում արտագաղթի դիրքորոշումները Հայաստանում կտրուկ աճել են:**

Արտագաղթի դիրքորոշումը սոցիալ-ժողովրդագրական խմբերում (Գծապատկեր 3), տղամարդկանց և կանանց, տարիքային, բարեկեցության և զբաղվածության խմբերում շատ բարձր էր: Նույնիսկ այդ դիրքորոշումների ամենացածր մակարդակն ունեցող 60-ից ավելի տարիքի անձանց խմբում այն կազմում էր 27%, իսկ 18-29 և 30-45 տարեկանների խմբերում՝ 58%:

Արտագաղթի դիրքորոշումները մի շարք այլ սոցիալ-ժողովրդագրական խմբերում, մասնավորապես տարբեր տիպի բնակավայրերում, ըստ հարցվողի կրթամակարդակի, ամուսնական վիճակի, ընտանիքում երեխաների քանակի, ընտանիքում սերունդների քանակի, միմյանցից էականորեն չէին տարբերվում, ինչը նշանակում է, որ.

- **Հայաստանի հասարակությունում արտագաղթի դիրքորոշումը կրում է համակարգային բնույթ:**



Գծապատկեր 3

Ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը և արտագաղթի դիրքորոշումը

«Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.» հետազոտությունում արտագաղթի դիրքորոշում ունեցող հարցվողներին տրվել էր «Ի՞նչ պատճառով եք ցանկանում մեկնել Հայաստանից» ստանդարտ հարցը: Սոցիալ-տնտեսական պատճառներ նշել էր[14] բոլոր հարցվածների 82.4%-ը (Գծապատկեր 4), որոնց թվում առավել հաճախ հանդիպել են «Աշխատանք չկա», «Աշխատավարձերը ցածր են», «Ապրելը դժվար է» և նմանօրինակ պատասխանները: Սոցիալ-հոգեբանական պատճառներ նշել էր հարցվածների 45.0%-ը, որոնց շարքում առավել

[13] Արտագաղթի դիրքորոշման գնահատման համար տրվել էր նույն հարցն, ինչ «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.» հետազոտությունում:
[14] Հարցվողները կարող էին տալ մի քանի պատասխան:

հաճախ հանդիպել են «Հայաստանում իմ [կամ երեխաներիս] համար ապագա չկա», «Ցանկանում եմ քաղաքակիրթ երկրում ապրել» և նմանօրինակ պատասխաններ:



Գծապատկեր 4

Հարց է առաջանում՝ արդյո՞ք այդ պատասխաններն ունեն իրական հիմք, թե՞ դրանք, ինչպես նշվել է վերևում, պարզապես սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների ռացիոնալացման արդյունք են: Այս հարցի պատասխանը տալիս է հետազոտությունում կիրառված մոտեցումը:

Հետազոտության ընթացքում հարցվողներին հարցեր են տրվել այն մասին, թե որքանով են նրանք բավարարված իրենց տնտեսական վիճակի տարբեր բաղադրիչներով, մասնավորապես բնակարանի վիճակով, ունեցած գույքով և ունեցվածքով, ֆինանսական վիճակով և այլն (Գծապատկեր 5): Այդ հարցերին տրված պատասխանների գործոնային վերլուծությամբ կառուցվել է «Ընտանիքի տնտեսական վիճակի գործոնը» (Գծապատկեր 6, երկրորդ գրաֆիկ): Գործոնի ցածր արժեքներին համապատասխանում է ընտանիքի տնտեսական վիճակից ցածր, իսկ բարձր արժեքներին՝ բարձր բավարարվածությունը:



Գծապատկեր 5

Գծապատկերից երևում է, որ այն անձանց շրջանում, որոնց բավարարվածությունն իրենց տնտեսական վիճակից ամենացածրն է (գործոնի 1 արժեքը), արտագաղթի դիրքորոշում ունի 60%-ը, իսկ այն անձանց շրջանում, որոնց բավարարվածությունն իրենց ընտանիքի տնտեսական վիճակից ամենաբարձրն է (գործոնի 5 արժեքը), արտագաղթի դիրքորոշում ունի 42%-ը, այսինքն՝ ընտանիքի տնտեսական վիճակից բավարարվածության գործոնն ունակ է արտագաղթի դիրքորոշումը նվազեցնել 18%-ով:

- **Հետևաբար, ընտանիքի տնտեսական վիճակի ընկալումն իրոք արտագաղթը պայմանավորող էական գործոն է:**

Իսկ որքանո՞վ է օբյեկտիվ այդ ընկալումը: Այս հարցը բովանդակություն է ստանում միայն հասարակությունում ընտանիքի բավարար կենսամակարդակի վերաբերյալ **հասարակայնորեն ընդունելի մակարդակի համատեքստում**: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2012թ. նոյեմբերին (հետազոտությանը նախորդող մասում) Հայաստանում միջին անվանական ամսական աշխատավարձը եղել է 119.422 դրամ: Այսինքն, իրական՝ առձեռն աշխատավարձը կազմել է մոտ 20%-ով պակաս, այսինքն՝ ամսական մոտ 95.000 դրամ: Եթե ենթադրենք, որ Հայաստանի միջին ընտանիքը կազմված է երկու չափահաս և երկու անչափահաս անդամներից և երկու չափահաս անդամներն աշխատում են և ստանում միջին աշխատավարձ, ապա այդ ընտանիքի ամսական եկամուտը կկազմի 190.000 դրամ: Մյուս կողմից, «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.» հետազոտության տվյալներով՝ հասարակությունում **նման ընտանիքի** «նորմալ» ապրելու համար անհրաժեշտ եկամուտը կազմում էր 295.000 դրամ:

- **Այսինքն՝ ընտանիքի տնտեսական անբավարար վիճակն, իրոք, Հայաստանի հասարակության համար միջին հաշվով ավելի «վատն» է, քան դրա հասարակայնորեն ընդունելի մակարդակը և, հետևաբար, այդ պատճառով առաջացած արտագաղթի դիրքորոշումներն ունեն օբյեկտիվ հիմք:**

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ.

- **եթե նույնիսկ արդյունավետ կերպով իրացվի ընտանիքի տնտեսական վիճակից գոհ լինելու գործոնի՝ արտագաղթը նվազեցնելու ներուժը, ապա արտագաղթի դիրքորոշում ունեցողների քանակը կկազմի 42%, որը նույնպես շատ բարձր է:**

Եվ դժվար է պնդել, որ արտագաղթի նվազեցման այդ գործոնի ունակությունը բավարար է Հայաստանում արտագաղթի խնդիրն էապես լուծելու համար:

Ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ հասարակական դիրքով և կյանքում հասած հաջողություններով բավարարվածությունը նույնպես արտագաղթի դիրքորոշումները նվազեցնող բնութագրեր են:

- **Անձի բավարարվածությունն իր հասարակական դիրքով և կյանքում հասած հաջողություններով, որն արտահայտվել է Սոցիալական դիրքի գործոնով** (Գծապատկեր 5), **նույնպես ունակ է նվազեցնել արտագաղթի դիրքորոշումները** (Գծապատկեր 6, երրորդ գրաֆիկ)**:**

Իսկ ի՞նչ է դա նշանակում: «Մակերևույթի» վրա է այն մեկնաբանությունը, որ Հայաստանում սոցիալական լիֆտերը չունեն մերիտոկրատական (անձի արժանիքների վրա հիմնված) բնույթ, այսինքն՝ մարդկանց աշխատանքային կարիերան և սոցիալական առաջխաղացումը կախված են ոչ թե նրանց աշխատանքային ունակություններից, փորձից կամ որակյալ մասնագիտական գիտելիքներից, այլ ծանոթություններից և կլիենտելաներում ընդգրկվելու ունակությունից: Սակայն ավելի խոր նետված հայացքի դեպքում դա այդպես չէ: Եթե նույնիսկ դրանք գրավվեին մերիտոկրատական հիմքերով, ապա «խաղից դուրս» կմնային նրանք, ովքեր այսօր [թեկուզ և անարժանորեն] գրավում են այդ դիրքերը, և, ընդհանուր հաշվով, այն մարդկանց քանակը, ովքեր բավարարված չեն կյանքում իրենց հաջողություններով և այդ պատճառով ունեն արտագաղթի դիրքորոշում, կմնա նույնը:

- **Այս գործոնի ադեկվատ մեկնաբանությունը նորից ստիպում է այդ գործոնի ազդեցությունը բացատրել աշխարհամակարգում Հայաստանի ծայրամասային դիրքով, քանի որ.**
- **պարզունակացված տնտեսությունում և հասարակությունում, մնացած հավասար պայմաններում, ավելի քիչ են հիերարխիկ մակարդակները և, հետևաբար, պրեստիժային դիրքերը**:

Երկրում առկա իրավիճակի ընկալումը և արտագաղթի դիրքորոշումները

Պարզվում է, որ.

- **հասարակությունում արտագաղթի դիրքորոշումները նվազեցնելու նշանակալի ներուժ ունեն նաև հասարակությունում երկրի ընդհանուր իրավիճակի վերաբերյալ ընկալումները:**

Արտագաղթի դիրքորոշումները նվազեցնելու այդ գործոնի ազդեցության ներուժը մոտավորապես հավասար է ընտանիքի տնտեսական վիճակից բավարարվածության գործոնի ներուժին: Եթե երկրի իրավիճակից առավել անբավարարված մարդկանց խմբում արտագաղթելու է հակված 61%-ը (Գծապատկեր 6, առաջին գրաֆիկ), ապա առավել բավարարվածների խմբում՝ 40%-ը, այսինքն՝ արտագաղթի դիրքորոշման նվազեցումը կազմում է 21%:



Գծապատկեր 6

Այդ գործոնը կառուցվել է երկրի վիճակը նկարագրող 29 փոփոխականների գործոնային վերլուծության արդյունքում (Գծապատկեր 7): Այդ փոփոխականների շարքում էին.

- Երկրի **տնտեսական վիճակը** նկարագրող բնութագրերը, օրինակ՝ անձի բավարարվածությունը գների մակարդակից (բավարարված է բնակչության 7.9%-ը), աշխատատեղերի առկայությունից (8.6%), աշխատողների իրավունքների պաշտպանվածությունից (23.5%) և այլն:
- Երկրում **սոցիալական ոլորտի** տարբեր բաղադրիչներից բավարարվածությունը, օրինակ՝ առողջապահության ֆինանսական մատչելիությունից (բավարարված է մարդկանց 22.9%-ը), առողջապահության որակից (բավարարված է 55.9%-ը), պատերազմի վտանգից Հայաստանի պաշտպանվածությունից (68.5%) և այլն:
- **Ենթակառուցվածքների ոլորտի** բաղադրիչներից, օրինակ՝ միջքաղաքային տրանսպորտի աշխատանքի որակից (բավարարված էր բնակչության 60.8%-ը), ինտերնետ կապի ծառայությունների որակից (73.6%) և այլն:
- **Կառավարման ոլորտի** բաղադրիչներից, օրինակ՝ կաշառակերության դեմ պայքարից (բավարարված էր բնակչության 23.1%-ը), երկրում օրենքների կիրառելիությունից (30.3%-ը), մարդու իրավունքների պաշտպանվածությունից (33.6%-ը) և այլն:

Այս գործոնը նույնպես, չնայած արտագաղթի դիրքորոշումները կառավարելու դրա նշանակալի ներուժին, արտագաղթի դիրքորոշումները նվազեցնելու տեսակետից դժվար է համարել բավարար ներուժ ունեցող:

Այդուհանդերձ, գործոնի բավական հզոր ներուժը ստիպում է ավելի ուշադիր և մանրակրկիտ ուսումնասիրել դրա ազդեցության առանձնահատկությունները: Ավելի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գործոնի կազմում արտագաղթի դիրքորոշումների նվազեցման առավել հզոր ներուժ ունեն հետևյալ բաղադրիչները (Գծապատկեր 8).

1. Երկրում տնտեսական զարգացման տեմպերը
2. Ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը
3. Միջքաղաքային ճանապարհների վիճակը
4. Միջքաղաքային տրանսպորտի աշխատանքի որակը
5. Երկաթուղու տոմսերի մատչելիությունը
6. Ընտրությունների արդարության մակարդակը
7. Կաշառակերության դեմ պայքարը
8. Երկրում օրենքների կիրառելիությունը
9. Կառավարության գործունեությունը:

Ներկայացված փոփոխականների շարքում առաջին երկուսն ուղղակիորեն արտապատկերում են Հայաստանի ծայրամասային դիրքն աշխարհամակարգում, և, հետևաբար, դրանց միջոցով արտագաղթի նվազեցումը ներկայացնում է.

- **Հայաստանի դիրքն աշխարհամակարգում բարձրացնելու խնդիրը,**

որն, ինչպես արդեն նշվել է, այլ հետազոտության նյութ է:

Փորձենք մեկնաբանել 3-րդ և 4-րդ փոփոխականների ազդեցությունը: Հայաստանի բնակչության մոտ 2/3-ը՝ գյուղերում և մարզային քաղաքներում բնակվողները, առնվազն շաբաթը մի քանի անգամ իրենց անձնական մեքենաներով (Հայաստանում անձնական մեքենա ունի ընտանիքների մոտ 37%-ը) կամ միջքաղաքային տրանսպորտով ճանապարհորդում է միջքաղաքային ճանապարհներով: Ճանապարհի յուրաքանչյուր փոս առաջացնում է վարորդների և ուղևորների դժգոհությունը, որն արտահայտվում է և՛ բառային տեսքով, և՛ հոգնածությամբ ու դժգոհությամբ: Եթե մեկ ուղևորության ընթացքում հանդիպած փոսերի քանակը բազմապատկենք տարվա ընթացքում ճանապարհորդությունների քանակով, ապա ստացվում է, որ անձը վատ ճանապարհների հետևանքով տարվա ընթացքում հազարավոր անգամներ մանտրայի նման կրկնում է իր դժգոհությունը երկրից և երկրում տիրող վիճակից, ինչն իրենից ներկայացնում է անգիտակից (գուցե և գիտակցված) **ինքնաներշնչում,** ինչն էլ բարձրացնում է արտագաղթի դիրքորոշումները: Նույնը, հայտնի չափով, վերաբերում է նաև միջքաղաքային տրանսպորտին: Իսկ գյուղաբնակերի մի մասի համար երկաթուղային տոմսերի գինը (5-րդ փոփոխական) բերքի իրացման ծախսերի առավել «տեսանելի» հատվածներից մեկն է:

Բացի դրանից, հիշենք, որ արևմտյան (եվրոպական և ամերիկյան) բարեկեցության «ամենատեսանելի» խորհրդանիշներից է բարձրակարգ և գերազանց վիճակում գտնվող ավտոճանապարհը:

Հետևաբար, պետք է փաստել, որ.

- **ներկայում Հայաստանում տարվող ինտենսիվ ճանապարհաշինությունը (նախատեսվող որակին համապատասխանելու դեպքում) ունակ է նվազեցնելու արտագաղթի դիրքորոշումները:**

Հայաստանում քաղաքական համակարգին և կառավարման որակի ոլորտներին վերաբերող 6-9 փոփոխականների տեսակետից (ընտրությունների արդարության մակարդակը, կաշառակերության դեմ պայքարը, երկրում օրենքների կիրառելիությունը և կառավարության գործունեությունը) բավարարվածության մակարդակը շատ ցածր է: Այդ ոլորտներում տիրող վիճակից բավարարված է բնակչության 20-27%-ը (Գծապատկեր 8):

Դրանցից առաջին երեքը ծագումնաբանորեն վերաբերում են Հայաստանի աշխարհամակարգային անցման ժամանակաշրջանի սկզբին՝ 1991-1996թթ. և, հատկապես, այդ անցման գաղափարախոսությանը՝ «շոկոթերապիային»: Հասարակարգային անցման ոլորտում շոկոթերապիայի գաղափարախոսական մաքսիմը հետևյալն էր.

- **« Կարևոր չէ, թե ինչպես է կատարվում անցումը պետական սեփականության ձևից մասնավորին, կարևոր է, որ այն կատարվի հնարավորինս արագ»[15]:**

Սակայն կյանքը ցույց տվեց, որ.

[15] Շոկոթերապիայի մասին կա հետևյալ կարծիքը. «Հոգեբուժությունում կիրառվող էլեկտրաշոկոթերապիան կարելի է համեմատել խափանվող սարքավորմանը հասցված բռնցքահարվածի հետ, և՛ մեկը, և՛ մյուսը ենթադրում են խորքային մեխանիզմների վերաբերյալ լիակատար անտեղյակություն, սակայն երբեմն արդյունք են տալիս» (*М. Арбиб,* Метафорический мозг, М., «Мир», 1976, с. 98).

- **Կարևոր է, թե ինչպես է կատարվում անցումը պետական սեփականության ձևից մասնավորին:**
- **Այն պետք էր կատարել դանդաղ և մտածված, չափավոր մասշտաբով՝ սեփականաշնորհելով փոքր բիզնեսին ոլորտի կազմակերպությունները և պահպանելով պետական սեփականությունը բանկային համակարգի, ենթակառուցվածքային և խոշոր ձեռնարկությունների նկատմամբ:**

Հետագա քննարկումներին թողնելով սեփականաշնորհման և դրա ձևերի ազդեցությունը և նշանակությունը հետխորհրդային Հայաստանի տնտեսության զարգացման հարցում՝ անդրադառնանք **շոկոթերապի և արագ սեփականաշնորհման սոցիալական գնին**:

Սեփականաշնորհումը կատարվեց արագ, անկատար օրենսդրության և դրա բացահայտ ու լատենտ խախտումներով, որի արդյունքում սեփականությանը տիրացան հիմնականում այն անձինք, ովքեր հարստանալու հարցում չունեին որևէ ներքին բարոյական արգելք: Սակայն հայտնի է, որ հասարակության վերնախավերն են սահմանում հասարակությունում «խաղի կանոնները»:



Գծապատկեր 7

Հայաստանում 1990-ականներին «հարստացեք» կարգախոսի բարոյազուրկ կիրառումը արագորեն կազմալուծեց հասարակության սոցիալական կապիտալը: Մարդիկ զանգվածաբար սկսեցին «զբաղվել բիզնեսով»՝ չունենալով դրա համար անհրաժեշտ տարրական գիտելիքներ: Շատերը բիզնեսով զբաղվելու համար գրավադրեցին իրենց բնակարանները՝ ավազակային տոկոսադրույքներով վարկեր վերցնելով ինստիտուցիոնալ և անհատ վաշխառուներից, արդյունքում՝ զանգվածաբար սնանկացան և, իրենց հարազատներին փողոցում թողնելով, զանգվածաբար փախան Հայաստանից: Արդյունքում՝ հասարակությունում կորսվեցին սոցիալիստական հասարակության կարևորագույն

սոցիալական ձեռքբերումները, մասնավորապես՝ վստահությունը մարդկանց նկատմամբ, կոլեկտիվիզմը: Զանգվածաբար աճեցին հորիզոնական համագործակցությանը խոչընդոտող դիրքորոշումներ: Օրինակ, ըստ «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2011թ.» հետազոտության տվյալների. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ որոշում է փողը» դրույթին համաձայն է եղել հարցվածների 86.3%-ը, « Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը» դրույթին՝ 81.6%-ը, «Այսօր ոչ ոք օրենքով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն» դրույթին՝ 65.0%-ը:

Այնպես, ինչպես ձեռք է բերվել հարստությունը, ձեռք է բերվել և պահպանվել է նաև քաղաքական իշխանությունը: Սկսած 1995թ. Ազգային ժողովի ընտրություններից, որոնք անցան ծայրահեղ անարդար և օրենքի ցինիկ խախտումներով, հասարակությունում ձևավորվել են կայուն և կրկնվող դիրքորոշումներ, որ ընտրություններն անարդար են, որ քաղաքական իշխանությունը և պետական պաշտոնյաները կոռումպացված են, իսկ օրենքները չեն կիրառվում[16]:

- **Վստահությունը կարելի է կորցնել ակնթարթորեն, իսկ վերականգնելու համար անհրաժեշտ են երկար ժամանակ և շարունակական իրական ապացույցներ, որ ընտրություններն արդար են, որ պետական պաշտոնյաներն այլևս կաշառք չեն վերցնում, քանի որ դրա համար խստիվ պատժվում են, իսկ օրենքները կիրառվում են, և ոչ միայն հասարակ ժողովրդի նկատմամբ, այլև վերնախավերի:**



Գծապատկեր 8

[16] Հիշենք, որ քաղաքական համակարգի նկատմամբ կայուն և կրկնվող դիրքորոշումները քաղաքական մշակույթի բաղադրիչներից են:

Սոցիալական պաշտպանվածության դեպրիվացիան և արտագաղթի դիրքորոշումները

Ուսումնասիրություններից պարզվել է, որ.

- **արտագաղթի դիրքորոշման վրա հզոր ազդեցություն է գործում նաև մարդու իրավական անպաշտպանվածության զգացողությունը** (իրավական դեպրիվացիան)**:**



Գծապատկեր 9

«Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.» հետազոտությունում իրավական է չափվել անձի՝ տարբեր տիպի վտանգներից պաշտպանվածության զգացողությունը հետևյալ հարցի միջոցով. «Որքանո՞վ է հավանական, որ կարող է տեղի ունենալ հետևյալը».

1. Ձեզնից կաշառք կպահանջեն՝ Ձեզ հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց
2. Կհանդիպեք ոստիկանության անարդարացի ճնշումների
3. Դատարանում Ձեր նկատմամբ անարդար վերաբերմունքի
4. Պետությունը կարող է խլել կամ զավթել Ձեր սեփականությունը
5. Որևէ հզոր անձ կարող է խլել կամ զավթել Ձեր սեփականությունը
6. Կարող են ձեզանից ինչ-որ բան գողանալ
7. Ցերեկը փողոցում կարող եք բռնության կամ այլ տհաճ միջադեպի ենթարկվել
8. Գիշերը փողոցում կարող եք բռնության կամ այլ տհաճ միջադեպի ենթարկվել
9. Հիվանդանալու դեպքում չեք կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում
10. Կարող եք մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների
11. Կարող են լինել հասարակական անկարգություններ և բռնություններ
12. Կարող է պատերազմ սկսվել
13. (Միայն անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքում) Կարող է բռնության ենթարկվել Ձեր երեխան՝ փողոցում կամ դպրոցում:

Յուրաքանչյուր դեպքի հավանականության ընկալումները ներկայացված են Գծապատկեր 10-ում:



Գծապատկեր 10

Այդ փոփոխականների գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք կարելի է բացատրել երեք գործոնով. **Գ1. իրավական դեպրիվացիայի գործոնով** (վերոնշյալ 1-5 փոփոխականներ), **Գ2. ֆիզիկական անվտանգության դեպրիվացիայի գործոնով** (6-8 փոփոխականներ) և **Գ3. սոցիալական անվտանգության դեպրիվացիայի գործոնով** (9-10 փոփոխականներ):

Այդ գործոններից արտագաղթի դիրքորոշումները նվազեցնելու ակնհայտ և հզոր ներուժ ունի միայն իրավական պաշտպանվածության դեպրիվացիայի գործոնը (Գծապատկեր 9, գրաֆիկ 1), որի ամենացածր արժեքի դեպքում (երբ **անպաշտպանության** զգացողությունն ամենացածրն է) արտագաղթի հակվածությունը 42% է, իսկ ամենաբարձր արժեքի դեպքում՝ 67%, այսինքն՝ գործոնն ունակ է արտագաղթի դիրքորոշումները նվազեցնել 25%-ով:

Գործոնի կառուցվածքը հուշում է, որ.

- **արտագաղթը խթանում է Հայաստանի վերնախավերի (հարուստներ, պետական կառավարիչներ, դատարան, ոստիկանություն) օրենքից բարձր լինելը և օրենքն իրենց շահերին ծառայեցնելը:**

Արդյո՞ք պատահական է, որ Հայաստանում առկա է այդպիսի իրավիճակ: Աշխարհամակարգային վերլուծությունը հուշում է, որ դա առավելապես պերիֆերային կապիտալիզմի երկրների բնութագիր է: Որքան ավելի բարձր է երկրի տեխնոլոգիական զարգացումը, այն-

քան ավելի ցածր է վերնախավերի կողմից օրենքի բացահայտ և անպատկառ խախտումների հաճախությունը: Հաճախ հասարակությունում օրենքի գերակայության առկայությունը նույնացնում են զարգացած ժողովրդավարության առկայության հետ, իսկ ավելի հաճախ՝ օրենքի գերակայությունը բխեցնում են ժողովրդավարության առկայությունից: Սակայն դա ոչ միշտ է ճիշտ:

Օրինակ, ժողովրդավարության ցածր զարգացման աստիճան ունի Սինգապուրը, որը, չնայած 2013թ. ժողովրդավարության ինդեքսի ցանկում գրավում է 81-րդ տեղը 167 երկրների շարքում, սակայն Doing Business ինդեքսով 1-ին տեղում էր, իսկ ըստ Համաշխարհային բանկի կառավարման ինդիկատորներից կոռուպցիայի վերահսկման ինդեքսի՝ այն ուներ 97 կարգը (հնարավոր 100-ից)՝ այդ ինդեքսի տեսակետից անմիջապես հաջորդելով Շվեյցարիային, իսկ օրենքի գերակայության ինդեքսի տեսակետից Սինգապուրը հաջորդում Լյուքսեմբուրգին: Նույնը վերաբերում է Հոնկոնգին, որը ժողովրդավարության ինդեքսի տեսակետից աշխարհում 80-րդն է, սակայն Doing Business-ի տեսակետից՝ 2-րդը, Համաշխարհային բանկի ինստիտուտի Կոռուպցիայի վերահսկման ինդեքսով ունի 93 կարգը և անմիջապես հետևում է Գերմանիային, իսկ օրենքի գերակայության ինդեքսի տեսակետից գտնվում է Ֆրանսիայից անմիջապես առաջ:

Ակնհայտ է, որ Սինգապուրը և Հոնկոնգը նման են Արևմուտքի ժողովրդավարական երկրներին ոչ թե ժողովրդավարության տեսակետից կամ իրենց մշակութային բնութագրերով, այլ **բարձր զարգացած տեխնոլոգիական տնտեսությամբ**, որը համարժեք է աշխարհատնտեսական բարձր *նիշաներում* գտնվելուն: Հետևաբար.

- **Ավելի շուտ բարձր տեխնոլոգիական արտադրությունների առկայությունն է տանում դեպի օրենքի գերակայություն, քան ժողովրդավարության առկայությունը:**

Այլ կերպ՝ հանգում ենք այն եզրակացության, որ.

- **Աշխարհամակարգի պերիֆերիկ երկրներում, այդ թվում Հայաստանում, օրենքի գերակայության հաստատմանը խոչընդոտում է աշխարհամակարգում նրանց նույն այդ պերիֆերիկ դիրքը:**

Կամ, այլ կերպ.

- **Տնտեսության բարձր տեխնոլոգիական ճյուղերի զարգացումը կնպաստի օրենքի գերակայության հաստատմանը:**

Իսկ դրույթի ընդհանրացման դեպքում կստանանք.

- **Հայաստանի աշխարհամակարգային նիշայի բարձրացումը կարող է հանգեցնել և՛ օրենքի գերակայության աճին, և՛ հետևաբար՝ արտագաղթի նվազեցմանը:**

Այսպիսով, ստանում ենք ակնհայտ բանական արդյունք՝ օրենքի համակարգային խախտումն անհամատեղելի է բարձր զարգացած տեխնոլոգիական տնտեսության հետ, քանի որ բարձր տեխնոլոգիաները չեն դիտարկում կամ ենթադրում ոչ կոմպետենտ կոռուպցիոն միջամտությունը՝ որպես բարձր տեխնոլոգիայի բաղադրիչ:

Քաղաքական ընդգրկվածությունը և արտագաղթի դիրքորոշումները

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ.

- **հետազոտությունում բոլոր դիտարկված գործոնների շարքում արտագաղթի նվազեցման ամենահզոր ներուժն ունի քաղաքական ընդգրկվածությունը:**

Քաղաքական ընդգրկվածությունը սահմանվել է որպես անձի մասնակցային քաղաքական մշակույթին հատուկ քաղաքական վարքի բնութագրերի առկայության չափ: Մասնավորապես, դիտարկվել են հետևյալ բնութագրերը, արդյո՞ք անձը.

1. հետաքրքրվում է քաղաքականությամբ,
2. համարում է, որ հասկանում է քաղաքականությունից,
3. համարում է, որ ընտրությունները կարող են ինչ-որ բան փոխել Հայաստանում,
4. մասնակցում է նախընտրական հանրահավաքներին ու քննարկումներին,
5. ընդհանրապես մասնակցում է ընտրություններին,
6. մասնակցել է 2012թ. ԱԺ ընտրություններին,
7. կուսակցության անդամ է,
8. ՀԿ անդամ է,
9. մասնակցում է համայնքային հարցերի լուծմանը:

Այդ բաղադրիչների միջոցով կազմավորվել է քաղաքական ընդգրկվածության ինդեքս, որի արժեքները փոխվում են 0-ից (երբ անձի մոտ բացակայում են բոլոր վերը նշված բաղադրիչները) մինչև 9-ը (երբ անձի մոտ առկա են բոլոր 9 բաղադրիչները): Ինդեքսի բաշխումը Հայաստանի հասարակությունում տրված է Գծապատկեր 11-Ա-ում, իսկ ինդեքսի ազդեցությունը արտագաղթի դիրքորոշումների վրա՝ Գծապատկեր 11-Բ-ում:



Գծապատկեր 11

Գծապատկեր 11-Բ-ից երևում է, որ քաղաքական ընդգրկվածության աճը [0; 8] միջակայքում ունի արտագաղթի դիրքորոշումները բավական հզոր կերպով նվազեցնելու ներուժ: Աշխատանքում դիտարկված բոլոր գործոնների շարքում այն ամենահզորն է: Եթե ինդեքսի 0 արժեքի դեպքում, որը կարելի է համարել քաղաքական «լիակատար օտարման» վիճակ, արտագաղթի դիրքորոշումները կազմում են 65%, ապա ինդեքսի 8 արժեքի դեպքում, որը կարելի է համարել քաղաքական ընդգրկվածության համարյա բարձրագույն աստիճանը, այն հավասար է 30%-ի, կամ՝ արտագաղթի դիրքորոշումների անկումը կազմում է 35%: Ինդեքսի 9 արժեքի դեպքում արտագաղթի դիրքորոշումները կտրուկ աճում են՝ հասնելով 43%-ի:

Քաղաքական ընդգրկվածությունից արտագաղթի դիրքորոշումների կախվածության ստացված տեսքը ստիպում է այն դիտարկել ավելի մանրամասն:

Արտագաղթի դիրքորոշումներն արագ նվազում են ինդեքսի 0-5 միջակայքում՝ 65%-ից մինչև 36%, կամ՝ ինդեքսի յուրաքանչյուր միավոր աճը հանգեցնում է արտագաղթի դիրքորոշման մոտ 6% նվազման: Ինդեքսի 5-8 միջակայքում արտագաղթի դիրքորոշման նվազման տեմպը կտրուկ նվազում է՝ այստեղ ինդեքսի աճի յուրաքանչյուր միավորը բերում է արտագաղթի դիրքորոշման 2% նվազման: Ինդեքսի ամենաբարձր՝ 9 արժեքի դեպքում այն կտրուկ աճում է 13%-ով: Ինչպե՞ս մեկնաբանել այս արդյունքները:

Հայաստանի հասարակությունը քաղաքացիական մշակույթի դասական հարացույցում[17] դասակարգելու փորձը[18] ցույց է տվել, որ 2007թ. Հայաստանում մասնակցային մշակույթին կարելի էր դասել հասարակության մոտ 6%-ին, իսկ հպատակային մշակույթին՝ մոտ 88%-ին, իսկ նահապետական մշակույթին՝ 6%-ին:[19] Քաղաքական ընդգրկվածության ինդեքսի Գծապատկեր 11-Ա-ում ներկայացվածից երևում է, որ քաղաքական ընդգրկվածության ինդեքսի 0-5 արժեք ունի Հայաստանի հասարակության 84%-ը, որը բավական ճշգրիտ հաղորդակցվում է Հայաստանի հասարակությունում հպատակային քաղաքական մշակույթ կրող շերտի 2007թ. ծավալի հետ, որը որոշ չափով նվազել է (ըստ երևույթին՝ այն պատճառով, որ 2007-2012թթ. 6 տարիների ընթացքում չափահաս դարձած երիտասարդության շերտում քաղաքացիական մշակույթը մի փոքր ավելի է տարածված, քան այդ տարիներին մահացածների շերտում): Հետևաբար, եթե համարենք, որ ինդեքսի 5 արժեքը հանդիսանում է քաղաքական մշակույթի տիպաբանական փոփոխության կետը, երբ քաղաքական մշակույթը հպատակայինից փոխվում է մասնակցայինի (ինդեքսի 5 արժեքը կարելի է համարել ինչպես արտագաղթի արագ նվազման միջակայքի վերջին կետ, այնպես էլ այդ դիրքորոշման դանդաղ նվազման միջակայքի առաջին կետ),[20] ապա ստացվում է, որ.

- **Քաղաքական ընդգրկվածության աճը.**
    - **Ինտենսիվ նվազեցնում է արտագաղթի դիրքորոշումները հպատակային մշակույթ կրող հասարակության լայն շերտերում (84%),**

---

[17] Տե՛ս *Алмонд Г., Верба С.,* Гражданская культура и стабильность демократии// «Полис» («Политические исследования»), 1992, №4.

[18] *Մանուկյան Ս.Ա.,* Հայաստանի հասարակությունում քաղաքացիական մշակույթի զարգացման սոցիոլոգիական կանխատեսման մոդելը և գործոնները / 21 ԴԱՐ, N5, 2010:

[19] Հիմքեր չկային ենթադրելու, որ Հայաստանում առկա է նահապետական քաղաքական մշակույթ կրող համահասարակական մասշտաբով վիճակագրորեն նշանակալի ծավալ ունեցող շերտ:

[20] Էկոնոմետրիկական տերմիններով ինդեքսի 5 արժեքը հանդիսանում է բաշխման սպեցիֆիկացիայի կամ կառուցվածքային փոփոխության կետ:

- **թույլ կերպով նվազեցնում է մասնակցային քաղաքական մշակույթ կրող հասարակական շերտում (15%) և**
- **հիմքեր կան ենթադրելու, որ քաղաքական ընդգրկվածության գերբարձր աստիճանները բարձրացնում են արտագաղթի դիրքորոշումները (հասարակության մոտ 1%):**

Ստացված արդյունքներից բխում է, որ քաղաքական ընդգրկվածության ինդեքսի կիրառությունը որպես արտագաղթի նվազեցման գործոն պետք է լինի տարբերակված:

Հպատակային քաղաքական մշակույթ ունեցող հասարակության լայն շերտերում արտագաղթի նվազեցման համար անհրաժեշտ է բարձրացնել նախ նրանց քաղաքական կոմպետենտության (տեղեկացվածությունը) և ընտրական (էլեկտորալ) սուբյեկտության զգացողությունը: Դա հնարավոր է իրականացնել՝ ինտենսիվացնելով պետության և հասարակության լայն շրջանակների հաղորդակցությունը: Դրա համար գերազանց գործիք կարող է ծառայել Խորհրդային Միությունում գործող «Գիտելիք» ընկերության անալոգը: Ինչպես հայտնի է, այդ ընկերությունն իր դասախոսների, կինոֆիլմերի, հեռուստահաղորդումների և հրատարակությունների միջոցով հասարակության լայն շրջանակներին ծանոթացնում էր աշխարհում և երկրում տեղի ունեցող իրադարձություններին, տալիս էր դրանց գնահատականները պետական գաղափարախոսության տեսակետից, ուղղորդում էր այդ թեմաների վերաբերյալ հասարակական կարծիքը: Ընկերությունը հասարակությանը և հատկապես երիտասարդներին ծանոթացնում էր համաշխարհային և խորհրդային գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներին, բացատրում դրանց կարևորությունն ինչպես խորհրդային տնտեսության և կոնկրետ մարդկանց կյանքի որակի և բարեկեցության բարձրացման հարցում, այնպես էլ խորհրդային երկրի և նրա գաղափարախոսության գլոբալ հեղինակության բարձրացման և գլոբալ նպատակների իրականացման ոլորտում: Այդպիսով տեղի էր ունենում հասարակության համակարգված և համընդհանուր կոնսոլիդացումը:

Այն փաստը, որ քաղաքական ընդգրկվածության ինդեքսի 5-8 միջակայքում գտնվող արժեքներով հասարակական շերտերում արտագաղթի դիրքորոշումների նվազումը բավական թույլ է, իսկ 8-ից բարձր արժեքի դեպքում (եթե ավելացվի բնութագրերի քանակը, մասնավորապես քաղաքական մասնակցության ավելի «արմատական» բաղադրիչներով) արտագաղթի դիրքորոշումները կտրուկ աճում են, կարելի է բացատրել հետևյալ կերպ: Երբ անձը քաղաքական մասնակցության պասիվ ձևերից՝ հետաքրքրություն, տեղեկացվածություն, կոմպետենտության և սուբյեկտության զգացողություն, անցնում է քաղաքական ընդգրկվածության ակտիվ ձևերին՝ մասնակցություն քաղաքական և հասարակական իրադարձություններին, ապա նրա համար պարզ է դառնում [քաղաքացիական] իր և հասարակության քաղաքական սուբյեկտության իրական աստիճանը, այսինքն՝ իրավիճակն էապես փոխելու սահմանափակ հնարավորությունները: Որքան ավելի է նա [քաղաքացիական մշակույթ կրողը] շփվում քաղաքական-հասարակական իրականությանը, այնքան լավ է նա գիտակցում իր քաղաքական սուբյեկտության աստիճանը, ինչն էլ արտահայտվում է արտագաղթի դիրքորոշումների նվազման տեմպում: Իսկ գերբարձր մասնակցության դեպքում պարզապես բացահայտվում է անձի անկարողությունն իր ամբիցիաների իրականացման հարցում, որը կարող

է առաջացնել ֆրուստրացիա և, որպես հետևանք, իրավիճակից խուսափելու, տվյալ դեպքում՝ արտագաղթելու դիրքորոշումներ[21]:

- **Հետևաբար, քաղաքական համակարգի ժողովրդավարացումը կամ հասարակության իրական մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը վերաբերում է քաղաքացիական մշակույթ կրող շերտի (15%) արտագաղթի դիրքորոշումների նվազեցմանը:**

Ինչ վերաբերում է գերբարձր մասնակցությամբ հասարակական շերտին (տվյալ աշխատանքի մեթոդաբանության շրջանակներում գնահատված որպես 1%), ապա պերիֆերիկ տնտեսությամբ երկրներում այն կարող է նույնականացվել որպես քաղաքական համակարգի ապակայունացման պոտենցիալ, և այստեղ արտագաղթի դիրքորոշումների խնդիրն առաջնայինների շարքում չէ:

Սոցիալական լարվածությունները և արտագաղթի դիրքորոշումը

Առողջ բանականությունը հուշում է, որ հասարակությունում առկա սոցիալական տարաբնույթ լարվածությունները նույնպես կարող են հանդիսանալ արտագաղթի պատճառներ: «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2102թ.» հետազոտությունում դիտարկվել են 15 տիպի սոցիալական լարվածությունների ընկալումները (Գծապատկեր 13): Այդ լարվածությունների գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք խմբավորվում են երեք գործոններում՝ դասակարգային լարվածության գործոն, ենթամշակութային լարվածության գործոն և սոցիալ-էկոլոգիական լարվածության գործոն: Ընդ որում, Հայաստանում առավել տարածված են **դասակարգային լարվածության գործոնի** կազմում գտնվող լարվածությունները.

1. Հարուստների և աղքատների միջև,
2. աշխատավոր մարդկանց և ձեռնարկությունների տերերի միջև,
3. աշխատողի ու նրա անմիջական ղեկավարի կամ վերահսկողի միջև:

Հարկ է նշել, որ այդ գործոնի կազմում է գտնվում նաև լարվածության ընկալումը պետության և աշխատավոր ժողովրդի միջև, ինչը նշանակում է, որ դասակարգային լարվածության հարցում հասարակությունը պետությունն ընկալում է որպես վերնախավերի շահերի պաշտպան:

Հետազոտությունը ցույց տվեց, որ դասակարգային լարվածության գործոնն ուժեղ ազդեցություն ունի արտագաղթի դիրքորոշման վրա (Գծապատկեր 12): Դասակարգային լարվածության ցածր ընկալումների տիրույթում արտագաղթի դիրքորոշումներ ունի բնակչության 42%-ը, իսկ բարձր լարվածությունների ընկալման տիրույթում՝ 56%-ը:

[21] Վերջին դրույթն ընդամենը հիպոթեզ է, որը «Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2012թ.» հետազոտության տվյալների շրջանակում հնարավոր չէ ոչ ընդունել և ոչ էլ հերքել:



Գծապատկեր 12



Գծապատկեր 13

Ակնհայտ է, որ դասակարգային լարվածությունները ներհատուկ են կապիտալիստական հասարակարգին և, ինչպես ցույց է տվել այդ լարվածությունների առանձին ուսումնասիրությունը[22],

- **դասակարգային լարվածության գործոնի բաղադրիչների կառավարելիության աստիճանը բավական ցածր է:**

Հետևաբար,

[22] *Մանուկյան Ս.Ա.,* Սոցիալական լարվածությունները Հայաստանում, «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, Երևան, 2013, 97 էջ (զեկույց ՀՀ Կենտրոնական բանկի պատվերով):

- **Արտագաղթի նվազեցման համար անհրաժեշտ են ինտելեկտուալ լուրջ ջանքեր՝ այնպես մոդիֆիկացնելու համար հասարակական հարաբերությունները, որոնք ունակ կլինեն նվազեցնելու դասակարգային լարվածությունները և, հետևաբար, արտագաղթի դիրքորոշումները:**

Հարկ է նշել, որ աշխարհամակարգային վերլուծության և հարակից տեսությունների շրջանակում[23] ցույց է տրվել, որ աշխարհամակարգի ծայրամասային երկրներում դասակարգային լարվածությունների սրությունը պայմանավորված է նաև նրանով, որ Կենտրոնի երկրները հնարավորություն ունեն իրենց հասարակություններում առաջացող սոցիալական լարվածություններն «արտահանել» ծայրամասային երկրներ, իսկ ծայրամասային երկրներն այդպիսի հնարավորություն չունեն:

- **Հետևաբար, դասակարգային լարվածությունների կառավարման միջոցով արտագաղթի նվազեցման հնարավորությունները նույնպես գտնվում են Հայաստանի աշխարհամակարգային դիրքի կամ տնտեսության տեխնոլոգիականության բարձրացման ոլորտում:**

Եզրակացություններ

Այսպիսով, ինչպես բացատրում և կանխատեսում են կախյալության տեսությունները, մասնավորապես, աշխարհամակարգային վերլուծությունը և Հայաստանում հավաքագրված էմպիրիկ սոցիոլոգիական տվյալները,

- **Հայաստանից արտագաղթի հիմնարար պատճառը կապիտալիստական աշխարհամակարգում Հայաստանի ծայրամասային դիրքն է, որի հետևանքով Հայաստանի վերակազմավորված տնտեսությունն ունակ չէ համապատասխան աշխատանքով ապահովել բնակչության նշանակալի զանգվածներին: Այդ դիրքը կանխորոշում է արտագաղթի դիրքորոշումների բազային բարձր արժեքները:**

Հետևաբար, արտագաղթի նվազեցման և հնարավոր ներգաղթի կազմակերպման համար բազային նախապայման են Հայաստանի տնտեսության որակական զարգացումը և անցումը դեպի արդյունաբերական *նիշաներ*: Նույնիսկ դրա ուղիների փնտրման բաց և անաչառ աշխատանքներն ունակ են նպաստելու Հայաստանում բարոյահոգեբանական մթնոլորտի փոփոխությանը:

Այդ գործունեությունն, անշուշտ, առաջին հերթին Հայաստանի վերնախավերի խնդիրների շարքում է:

Ընդ որում, այդ ուղղությամբ խորհելիս և գործելիս հարկ է կանխավ գիտակցել և խորապես ընկալել, որ.

- **հասարակական զարգացումն ունի իր գինը, որը պետք է վճարվի նախ և առաջ վերնախավերի կողմից՝ իրենց դրամական, իշխանական կամ պրեստիժային ռեսուրսներից,**

[23] *Мюрдаль Г.,* Мировая экономика. Проблемы и перспективы. М., 1958, с. 479, *Баран П.,* К экономической теории общественного развития, М., 1960, с. 368.

քանի որ հասարակությունն այդ գինը վճարում է հայրենազրկվելով: Դա կարող է լինել, մասնավորապես՝ հրաժարումը մոնոպոլ, օլիգոպոլ կամ այլ բնույթի գերշահույթից, համաձայնումը շահույթի նորմայի և մասսայի նվազմանը, հրաժարումը բարձրագույն իշխանության կողմից բիզնեսի գրավման պրակտիկայից, հրաժարումը կորպորատիվ մենեջմենթի գերբարձր աշխատավարձերից ու բոնուսներից, երկարատև (5-10 և ավելի տարի հետվարադարձի ժամանակահատվածով), լայնամասշտաբ (միլիարդ և ավելի դոլարների հասնող) ներդրումները, Սփյուռքի փորձագիտական և բիզնես ռեսուրսի ներգրավումը ոչ միայն տնտեսական ոլորտում, այլև քաղաքական որոշումների ձևավորման և կայացման գործընթացներում, ֆինանսական և ֆունկցիոնալ առումով թափանցիկ բիզնեսը, աշխատանքի և աշխատուժի պաշտպանությունը (պետք է պատժել նրան, ով չի ցանկանում աշխատել, այլ ոչ թե նրան, ով աշխատանք չունի կամ աշխատող մարդուն), հանրային ծառայությունների ապաառևտրայնացումը, գիտական ներուժի ընդգրկումը ոչ միայն որոշումների ձևավորման, այլև կայացման հարցերում, ինչը կբարձրացնի այդ խավի հասարակական վարկը, հրաժարումը կլիենտելաներից և նեպոտիզմից, խիստ պատիժները վերնախավային կաշառակերության համար՝ կաշառքից ստացած օգուտների բազմապատիկ տույժերով, գույքի բռնագրավման պարտադիր կիրառմամբ և կաշառակերության ոլորտում անմեղության կանխավարկածի վերացմամբ:

Վերնախավերը պետք է ըմբռնեն, որ հակառակ դեպքում, այնքան էլ հեռու չի լինի պահը, երբ ստիպված կլինեն «ավերակների վրա թագավորել»: Արդեն այսօր զգացվում է բնակչության կրճատման հետևանքով լայն սպառման ապրանքների, այդ թվում գազի և էլեկտրաէներգիայի վաճառքների անկումը: Իսկ կորսված շահույթի կոմպենսացման նպատակով գների բարձրացումն էլ ավելի կխթանի արտագաղթը: Առաջիկա 3-5 տարիների ընթացքում ամբողջ հզորությամբ զգալ կտա 1990-ականների երկրորդ կեսի ծնունդների անկումը՝ զորակոչային տարիքի անձանց և ծնունդների քանակի խիստ կրճատմամբ:

- **Արտագաղթի մյուս հիմնարար պատճառն է 1990-ականների սկզբին աշխարհամասշտաբային անցման (որի բաղադրիչն էր հասարակարգային անցումը) կոնկրետ շոկոթերապիայի տեխնոլոգիան, որը կազմալուծեց սոցիալական կապիտալը Հայաստանի հասարակությունում, խիստ նվազեցրեց վստահության և համագործակցության ներուժը և՛ հասարակության անդամների ու խմբերի, և՛ պետության ու հասարակության միջև:**

Սոցիալական կապիտալի պակասը խոչընդոտում է նախ և առաջ փոքր բիզնեսի զարգացմանը, ինչը կոմպենսացվում է նրանով, որ այդ նույն պակասն այլասերման ճանապարհով է ուղղորդում քաղաքացիական հասարակության զարգացումը. հայտնի է, որ հասարակական կազմակերպությունների նշանակալի հատվածն ընտանեկան «փոքր բիզնես» է ներկայացնում՝ միջազգային դոնորական ֆինանսավորմամբ:

Ազգային մասշտաբում սոցիալական կապիտալի վերականգնման գործուն միջոց է պետության և հասարակության երկխոսությունը: Ընդ որում, հարկ է ձերբազատվել «իմիտատիվ երկխոսության» պրակտիկայից, երբ արևմտյան ֆոնդերի ֆինանսավորմամբ գործող հասարակական կազմակերպությունները և միջազգային դոնորների կողմից պարտադրված պետական մարմինները կառուցողական երկխոսության պատրանք են ստեղծում՝

«իրացնելով» յուրաքանչյուրն իր կանալով ստացած ֆինանսավորումը: Երկխոսության ընթացքում անհրաժեշտ է «զատել ցորենը դարմանից»: Քննարկումները պետք է լինեն կոմպետենտ սուբյեկտների միջև, իսկ ոչ կոմպետենտ սուբյեկտների կարծիքները հավաքագրելու համար կան մի շարք արդյունավետ միջոցներ:

Արդյունավետ հաղորդակցության կարևորագույն նախապայմանը հստակ և հակիրճ ուղերձի առկայությունն է: Պետությունը պետք է հստակ գիտակցի, թե ինչ է ցանկանում հաղորդել հասարակական գիտակցությանը և ինչ է ցանկանում լսել նրանից: Հայաստանը մտել է կարևորագույն որոշումների ընդունման փուլ, և խիստ անհրաժեշտություն է, որպեսզի հանրապետության բարձրագույն իշխանությունը պարբերաբար հաղորդակցվի իր ժողովրդի լայն լսարանի հետ: Անշուշտ, դա պահանջում է նման միջոցառումները կազմակերպողների բարձր պրոֆեսիոնալիզմ, հակառակ դեպքում դրանք, ավելի շուտ, կվնասեն:

- **Պետք է ընդունել, որ գոյություն չունի ապագաղափարականացված հասարակություն, որ «ապագաղափարականացված հասարակությունը» նույնպես գաղափարախոսություն է:**

Անհրաժեշտ է ստեղծել պետական ինֆորմացիոն-մշակութային և կրթադաստիարակչական քաղաքականությունը և հայաստանյան ինֆորմացիոն-մշակութային դաշտը համակարգված կերպով ձևավորող մարմին, չի բացառվում՝ գոյություն ունեցող առանձին մարմինների միավորման և վերաձևավորման միջոցով:

Նշված երկու բազային գործոններից ածանցվում են այն մասնակի գործոնները, որոնք ունակ են դրանցով սահմանված շրջանակներում արդյունավետ կառավարել արտագաղթի դիրքորոշումները Հայաստանում՝ աշխատանքում դիտարկված մնացած ածանցյալ գործոնների կառավարման միջոցով:

Այդուհանդերձ, հարկ է գոնե հպանցիկ դիտարկել Հայաստանի աշխարհամակարգային *նիշայի* բարձրացման գլոբալ հնարավորություններն արդի աշխարհում:

Սկսած 2000-ականներից՝ ակնհայտ է դարձել, որ աշխարհում սկսվել են քաղաքակրթական, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ռեգիոնալացման նոր հզոր գործընթացներ: Ռեգիոնալ զարգացման կենտրոններն աստիճանաբար կասկածի տակ են դնում աշխարհամակարգի հեգեմոնի՝ ԱՄՆ բացառիկ դերն ու առաջնորդությունը տարբեր ոլորտներում: Դրա օրինակներն են Շանհայի համագործակցության կազմակերպությունը, БРИГС-ը և իրեն վերջերս ներկայացրած Ռուսաստան – Բելառուս – Ղազախստան Մաքսային միությունը՝ Եվրասիական տնտեսական միության կազմավորման հեռանկարով: Տնտեսական ռեգիոնալացումն աշխարհամակարգային հեգեմոնի թուլացման և՛ սիմպտոմն է, և՛ հետևանքը:

Տեսական-հայեցակարգային տեսակետից ռեգիոնալացման գործընթացը նորություն չէ[24]: Մինչև XXI դարը դա կոչվում էր պրոտեկցիոնիզմ: Սկսած XVIII դարից եվրոպական հիմնական [հզոր] պետությունները, այդ թվում նաև Մեծ Բրիտանիան, վարում էին պրոտեկցիոնիստական քաղաքականություն: Մեծ Բրիտանիան Հոլանդիայի դեմ համաշխարհային

[24] Խոսքն աշխարհամակարգային հեգեմոնի կողմից և առաջնորդությամբ կազմավորված տնտեսական և ռազմաքաղաքական բլոկների մասին չէ:

հեգեմոնի վերածվելու համար մղվող տնտեսական մրցակցությունում, ի վերջո, հաղթեց պրոտեկցիոնիզմի քաղաքականությամբ, որը սկսվել էր 1690թ.: Միայն XIX դարում, երբ Մեծ Բրիտանիան դարձավ տնտեսապես և տեխնոլոգիապես աշխարհի ամենազարգացած երկիրը՝ հեգեմոնը, այն վերածվեց ազատ առևտրի ջատագովի: Հայտնի է, որ ազատ առևտրի տնտեսական քաղաքականությունը թույլ է տալիս առավել զարգացած երկրին շահագործել իր ավելի թույլ զարգացած «գործընկերներին»[25]:

ԱՄՆ-ը նույնպես անցել է տնտեսական զարգացման պրոտեկցիոնիստական փուլը, որը սկսվել է քաղաքացիական պատերազմից հետո՝ 1865թ. և տևել է մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը, երբ ԱՄՆ-ը՝ որպես համաշխարհային հեգեմոն, փոխարինեց Մեծ Բրիտանիային և, բնականաբար, վերածվեց ազատ առևտրի քաղաքականության առաջամարտիկի: Պրոտեկցիոնիզմի փուլով են անցել նաև մայրցամաքային Եվրոպայի զարգացած այն երկրները, այդ թվում՝ Գերմանիան և Ֆրանսիան, որոնք երբևէ նպատակադրվել էին վերածվելու բարձր զարգացած տնտեսությամբ տեխնոլոգիական երկրների: Եվրոպական պրոտեկցիոնիզմն ավարտվեց միայն XX դարի 60-ականներին:

Համաշխարհային պատմությունը, մասնավորապես XVI-XX դարերի պատմությունը ցույց է տվել, որ **արդիականացման տեսությունները** և դրանց վրա հիմնված ռազմավարությունները կամ, այլ կերպ՝ «զարգացած երկրներին հասնելուն նպատակաուղղված զարգացումը» («догоняющее развитие») ոչ մի երկրում երբեք չի հասել իր նպատակին: Ընդհակառակը՝ հեգեմոնի փոփոխությունը միշտ տեղի է ունեցել այդ կարգավիճակին հավակնող երկրներում իրենց ինտենսիվ զարգացման փուլում տնտեսական պրոտեկցիոնիզմի կիրառմամբ[26]:

Պրոտեկցիոնիստական քաղաքականությունն արդյունավետ է **միայն** բավական զարգացած և մեծ ներքին շուկա ունեցող երկրներում[27]: XXI դարում արդեն չկան այնպիսի պետություններ, բացի ՉԺՀ-ից, որոնց սպառողական շուկան (մարդկային ռեսուրսները), բնական ռեսուրսները, գիտատեխնոլոգիական զարգացման մակարդակը և ռազմական հզորությունը թույլ կտան իրականացնել պետական պրոտեկցիոնիստական քաղաքականություն: Եվրոպական միությունն, իր 28 անդամով և 500 միլիոն բնակչությամբ, ինքնաբավ շուկա է՝ այն յուրահատկությամբ, որ նրա հետագա զարգացման համար անհրաժեշտ են հսկայական քանակով հանքահումքային ռեսուրսներ, որոնք անբավարար են բուն ԵՄ տարածքում: Իրենց

---

[25] Հայտնի է օրինակ, որ Մեծ Բրիտանիան կտրականապես արգելում էր արդյունաբերության զարգացումն իր գաղութներում. դրանք պետք է մնային որպես հումքային կցորդներ: Օրինակ, ամերիկյան գաղութներին արգելվում էր նույնիսկ մեխ արտադրել (տե՛ս Всемирная история. Энциклопедия. Том 5. Глава XXI. Война английских колоний в Северной Америки за независимость. Образование Соединённых Штатов Америки. Политика ограничения промышленности в колониях.): XX դարի Հայոց պատմության «եվրոպակենտրոն» այլընտրանքային մեկնաբանությունների և գնահատականների դեպքում այս և նման տեսական դրույթներն ու փաստերը հարկ է կիրառել որպես մեթոդաբանական ուղենիշներ:

[26] Հարկ է նշել, որ դա նույնպես չի երաշխավորում բացարձակ հաջողություն: Հաճախ հեգեմոնը պատերազմներ հրահրելու կամ ուղղակի ինտերվենցիայի միջոցով կործանում է իր իրական հակառակորդներին: Դրա ամենավառ ապացույցներն են Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները:

[27] Ըստ Մ. Խազինի, եթե XX դարի սկզբին տնտեսական ինքնաբավության բավարար մակարդակ ունեցող կարելի էր համարել 50 միլիոնի կարգի բնակչությամբ շուկան, ապա XX դարի վերջին այդպիսին կարող էր համարվել արդեն 500 միլիոն բնակչությամբ շուկան (*М. Хазин,* Мир на пороге новых времен, «Дружба Народов», 2012, №7).

հնարավորությունների սահմաններում ռեգիոնալացման փորձեր են կատարում նաև տարածաշրջանային գերտերությունները, օրինակ՝ Իրանը և Թուրքիան:

Այսպիսով, արդի աշխարհում պրոտեկցիոնիզմը հնարավոր է միայն պետությունների խմբի կողմից, որը և հանդիսանում է ժամանակակից ռեգիոնալացման բուն նպատակն այդ պետությունների **իրական** (այլ ոչ ֆորմալ) **սուվերենության** հաստատման ճանապարհին:

Հայաստանի աշխարհամակարգային տեղի բարձրացման կամ տնտեսության տեխնոլոգիականացման խնդիրը հարկ է դիտարկել նշված գլոբալ միտումների շրջանակում[28]: Այս տեսակետից է, որ պետք է քննարկվեն Եվրոպական միության հետ **ասոցիացման** և Եվրասիական տնտեսական միությունում **ընդգրկվելու** սցենարները[29]:

Հայաստանի համար առկա այլընտրանքը դիլեմա է ներկայացնում՝ մնալ աշխարհամակարգային կենտրոնի պերիֆերիա՞, թե՞ հավասար անդամի կարգավիճակով ընդգրկվել նոր ռեգիոնալ հավակնոտ նախագծին՝ **մասնակցելով այդ նախագծում խաղի կանոնների ձևավորմանը**: Այստեղ հանգուցային հասկացություններն են. «ասոցիացումը» և «մասնակցությունը»: Առաջին դեպքը Հայաստանը պերիֆերիկ կամ հումքային կցորդի կարգավիճակում Կենտրոնի հետ հարաբերվելու հոմանիշն է համարվում: Ասոցիացված անդամը չունի իրավունքներ, այլ ունի միայն պարտականություններ՝ կատարել Կենտրոնի դիրեկտիվները: Ասոցիացման շրջանակներում Հայաստանում նախատեսվող ինստիտուցիոնալ բարեփոխումները ոչ թե Հայաստանի զարգացման նախապայմաններ են, այլ Հայաստանում Կենտրոնի գործունեության տեխնոլոգիականացման և ստանդարտացման պահանջը: Եվրոպական միությանը և նրա տնտեսվարող ընկերություններին հետխորհրդային Հայաստանում ոչինչ չէր կարող խանգարել հիմնադրելու արդյունաբերական ձեռնարկություններ՝ պերիֆերիկ փոքր և թույլ երկրում գոյություն չունեն այնպիսի խոչընդոտներ, ներառյալ բարձրագույն իշխանության պարտադրանքը կամ պրովինցիալ չինովնիկների կոռուպցիոն նկրտումները, որոնք իրական դժվարություն կարող էին ներկայացնել Կենտրոնի լուրջ ընկերությունների համար, որոնց տարեկան շրջանառությունը քանիցս գերազանցում է Հայաստանի պետական բյուջեն: Սակայն Հայաստանում հիմնադրվել են դասական գաղութացված երկրին հարիր հանքահումքային ոլորտի ձեռնարկություններ, որոնք չեն պահպանում էկոլոգիական նվազագույն ստանդարտները:

Եվրասիական տնտեսական միությունում, որն ամբիցիոզ տնտեսական ռեգիոնալացման նախագիծ է և որի գոյության կարևորագույն նախապայմանն են Ռուսաստանի Դաշնության միջուկային սպառազինության գերժամանակակից և ավելի քան բավարար հզորությամբ ուժերը[30], կարող են գործարկվել ոչ միայն Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, այլև

---

[28] Գլոբալ միտում պետք է դիտարկել ոչ թե միայն աշխարհի «գլոբալացումը», այլև «գլոբալ» աշխարհի ռեգիոնալացումը:

[29] Ներկայում (2013թ. նոյեմբեր) Հայաստանն իրականացնում է երկրորդ սցենարը, սակայն չի կարելի բացառել, որ գոյություն ունի դեպի առաջին սցենար շրջադարձի կամ որևէ ֆորսմաժորային սցենարի հավանականություն:

[30] **Ավելի քան բավարար հզորությամբ** ռազմավարական միջուկային ուժերի առկայությունը կարևորագույն դեր ունի ռեգիոնալացման այդ նախագիծը բացահայտ ռազմական ինտերվենցիայից զերծ պահելու հարցում: Այս նախագծի հաջողության հիմնական խոչընդոտներն են Միջին Արևելքի անկայունությունը (Աֆղանստանում իրավիճակի կտրուկ վատթարացման հետևանքով), այդ թվում գլոբալ ահաբեկչությունը, նարկոթրաֆիկը, ինչպես նաև ներքին հարցերում, նախ և առաջ, անարդյունավետ

նրա մտավոր ներուժը, որի մասին խոսվում է արդեն ավելի քան 20 տարի, սակայն որի գործարկման արդյունքները շատ համեստ են: Տեխնոլոգիական առաջընթաց զարգացման ձգտող ռեգիոնալ միությունը մեծ հավանականությամբ կձգտի իրականացնել այդ ներուժը: Եվրասիական տնտեսական միության տնտեսության վիճակը բարձրացնում է հետխորհրդային տնտեսական տարածքում Հայաստանի նախկին տնտեսաարդյունաբերական կապերի վերականգնման հավանականությունը:

Եթե անդրադառնանք տվյալ աշխատանքի հիմնական խնդրին՝ Հայաստանից «ընթացիկ» արտագաղթին, ապա այստեղ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանը (Եվրասիական տնտեսական համագործակցությանը միանալու հեռանկարով) անդամակցելու այլընտրանքը՝ ասոցիացումը Եվրոպական միության հետ, կարող էր փակել Ռուսաստանում արտագնա աշխատանքի հնարավորությունը 150.000 մարդու համար, որոնք ապահովում են Հայաստանի մոտ 600.000 բնակչի բարեկեցությունը: Դեպի Ռուսաստան արտագնա աշխատանքի հնարավորության բացառումը մեծ հավանականությամբ կհանգեցներ ընտանիքներով Ռուսաստան արտագաղթողների շատ ավելի մեծ ալիքի, քան առկա է ներկայում:

Եզրափակելով՝ նշենք, որ Եվրասիական ռեգիոնալ ինտեգրացիոն նախագծին միանալու Հայաստանի ընտրությունը ստիպում է նորովի ձևակերպել Հայաստանի զարգացման և՛ համակարգային մոտեցումները, նպատակներն ու ռազմավարությունները, և՛ դրանցից ածանցվող մասնակի ռազմավարությունները: Սակայն կարևորն այն է, որ տվյալ դեպքում առկա է ռազմավարական պլանավորման հստակության և իրականացման արդյունավետության համար կարևորագույն պայմաններից մեկը՝ ռազմավարական որոշակիությունը:

կառավարումը (կոռուպցիան): Մնացած **ներքին սպառնալիքները**՝ ազգայնական անջատողականությունը, հասարակական բարքերի այլասերումը և անօրինական միգրացիան, այդ **հիմնարար** խոչընդոտի ածանցյալներն են: